ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՃԱՃԿՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաճաճկուտ համայնք , հասցե փ.1 շ.1
Հեռախոս 099-867-867 , Էլ. Փոստ kachachkuti@mail.ru

<< 30 >> նոյեմբեր 2015թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն

Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ եմ ներկայացնում Կաճաճկուտ գյուղական համայնքի ավագանու 2015թ. նոյեմբերի 20-ի թիվ 12-14 որոշումները :
Առդիր՝ 11 թերթ :

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավար՝ Մ. Թամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաճաճկուտ համայնք,հասցե փ.1 շ.1
հեռախոս 099-867-867 , էլ. Փոստ kachachkuti@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«20» նոյեմբեր 2015 թվականի N 12 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով

Կաճաճկուտ համայնքի ավագանին որոշում է .

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Կաճաճկուտ գյուղական համայնքի ապրանքանյութական արժեքների գույքագրման ցուցակը համաձայն ձևի:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
		–	–
Համլետ Պողոսյան		–	–
Արման Դալլաքյան		–	–
Վազգեն Ալեքսանյան		–	–

Համայնքի ղեկավար՝ Մ. Թամազյան

2015 թ. նոյեմբեր « 20 »
գ. Կաճաճկուտ

ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿ N.

«20» նոյեմբերի 2015 թ.

ՀՀ Լոռու մարզ գ. Կաթնաղբյուր Կաթնաղբյուրի գյուղապետարան»

ՍՏԱՑԱԿԱՆ

Գույքագրման անցկացման սկզբում բոլոր ապրանքանյութական արժեքների մուտքային և ելքային փաստաթղթերը հանձնված են հաշվապահություն, բոլոր ստացված ապրանքանյութական արժեքները մուտքագրված են և բոլոր դուրս գրված ապրանքանյութական արժեքները ելք են արված:

Նյութական պատասխանատու անձ

համայնքի ղեկավար (պաշտոնը) Ճանոյան Մխիթար (ազգանուն, անուն) ________ (ստորագրություն)

1-ին կարգի մասնագետ (պաշտոնը) Պողոսյան Արմենուհի (ազգանուն, անուն) ________ (ստորագրություն)

Գույքագրումը սկսվել է

«15» նոյեմբերի 2015 թ.

Գույքագրումը վերջացել է

«20» նոյեմբերի 2015 թ.

7207001

հ/հ	Անվանակարգ	Ապրանքանյութական արժեքների անվանումը, տեսակը, խումբը և այլն	Չափ. միավ.	Գինը	Փաստացի կանխիկ		Հաշվապահական հաշվառման տվյալ	
					քանակ	գումար	քանակ	գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1		Կոմպակտ		3346890	1	3346890	1	3346890
2		Կոմպակտ		985544	1	985544	1	985544
3		Հեռատեսակների կրակամարտեր		-	1	-	1	-
4		Գրասեղանի կայանատեղի		125243	1	125243	1	125243
5		Գրասեղանի շեղեր		293718	1	293718	1	293718
6		Գրասեղ տեղ		39717	1	39717	1	39717
7		Ալ. ապրանք		29365	1	29365	1	29365
8		Գործող սրահների տարածում		8992	1	8992	1	8992
9		Հեռախոսների տուփեր		11234	2	22468	2	22468
10		Հեկտորի շեղեր		-	1	-	1	-
11		Գրասեղան		4500	4	18000	4	18000
12		Գրասեղան գրասենյակ		9500	1	9500	1	9500
13		ԱՍՏ տեղ		16912	3	50736	3	50736
14		Գիպսակոմ գրասենյակ փոքր		7709	1	7709	1	7709
15		Կատալոգ		1540	5	7700	5	7700
16		Հիրոտ փոստարկղ		10000	6	60000	6	60000
17		Ալ. պիրոգ		11000	1	11000	1	11000
18		Ռեպեր սարք		139000	1	139000	1	139000
19		Գրասենյակ համակարգիչ		149500	1	149500	1	149500
20		համակարգչի պրոցեսոր		6083	1	6083	1	6083
21		համակարգիչ		160000	1	160000	1	160000
22		Մոնիտոր LCD20		60000	1	60000	1	60000
	ԳՐԱՖԻԿԱ							
1		Գրաֆիկան		816	15	12240	15	12240
2		Հարթ նամակ		562	1	562	1	562
3		Կարգադրության թերթ		889	1	889	1	889
4		Անշարժ գրասենյակ		1409	1	1409	1	1409
	ԼԱՄԻՆԱՏ							
1		Ներդրում		21500	8	172000	8	172000
2		Կտրիչ		16551	1	16551	1	16551
3		Ցրտակուշտ 2 հարկ		3500	1	3500	1	3500
4		Կտրատի գրասենյակ		33193	1	33193	1	33193
5		Անշարժ ապահովագրության		18372	1	18372	1	18372

հ/հ	Անվանակարգ	Ապրանքանյութական արժեքների անվանումը, տեսակը, խումբը և այլն	Չափ. միավ.	Գինը	Փաստացի կանխիկ		Հաշվապահական հաշվառման տվյալ	
					քանակ	գումար	քանակ	գումար
1	2	3	4	5	6	7	8	9
6		Սեղան համակարգչային		35957	3	107872	3	107872
7		Անխափան սնուցման սարք MERCURY 650VA		20000	2	40000	2	40000
8		համակարգչային երկարացուցիչ		8000	1	8000	1	8000
9		Բազմաֆունկցիոնալ սարք Canon i-SENSYS MF-4410		130000	1	130000	1	130000
10		Տաքացուցիչ		22500	1	22500	1	22500
11		համակարգիչ		150000	2	300000	2	300000
12		Մոնիտոր		60000	2	120000	2	120000
13		Աթոռ		12000	2	24000	2	24000
14		Բարձրախոս		5000	1	5000	1	5000
15		[illegible]		2000	1	2000	1	2000
16		[illegible]		9500	1	9500	1	9500
		Ընդամենը		5968196	34	6558753	34	6558753

Փաստացի քանակների ընդհանուրը ______________________ (տառերով)

Փաստացի գումարների ընդհանուրը ______________________ (տառերով)

Հանձնաժողովի նախագահ՝

Թամազյան Մխիթար (ազգանուն, անուն) ______________________ (ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

[illegible] (ազգանուն, անուն) ______________________ (ստորագրություն)

[illegible] (ազգանուն, անուն) ______________________ (ստորագրություն)

[illegible] (ազգանուն, անուն) ______________________ (ստորագրություն)

[illegible] (ազգանուն, անուն) ______________________ (ստորագրություն)

Նյութական պատասխանատու անձ՝

Թամազյան Մխիթար (ազգանուն, անուն) ______________________ (ստորագրություն)

«20» նոյեմբերի 2015 թ.

[illegible] (ազգանուն, անուն) ______________________ (ստորագրություն)

«20» նոյեմբերի 2015 թ.

ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<20>> նոյեմբեր 2015 թ. N 13 -Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

Հաստատել Կաճաճկուտ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Ուժը կորցրած ճանաչել Կաճաճկուտ գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հուլիսի 1 -ի << Կաճաճկուտ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը >> N 05 որոշումը :

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից :

Ազգանուն, Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
[illegible]		-	-
[illegible]		-	-
[illegible]		-	-

Համայնքի ղեկավար՝ ____________ Մ.Թամազյան

Հավելված

Կաճաճկոտ գյուղական համայնքի ավագանու

20 15 թվականի նոյեմբեր 20 -ի N 13 որոշման

ԿԱՃԱՃԿՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 6 :

Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	139.0
Աշխատակազմի քարտուղար	1	102.0
Աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ	1	89.0
Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	89.0
Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ-գանձապահ	1	82.0
Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	1	82.0
Ընդամենը գյուղապետարան	6	583.0

Համայնքի ղեկավար՝ _____ *Մ.Թամազյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՃԱՃԿՈՒՏԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաճաճկուտ համայնք,հասցե փ.1 շ.1
հեռախոս 099-867-867, էլ. Փոստ kachachkuti@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«20» նոյեմբեր 2015 թվականի N 14 - Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՃԱՃԿՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով , <<Հայաստանի Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով ՝ Կաճաճկուտ համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել ՀՀ Լոռու մարզի Կաճաճկուտ գյուղական համայնքում 2016թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել ՀՀարդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Արման Դալլաքյան		–	–
Համլետ Պողոսյան		–	–
Վազգեն Ալեքսանյան		–	–

Համայնքի ղեկավար՝ Մ. Թամազյան

2015 թ. Նոյեմբեր ի «20»
գ. Կաճաճկուտ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի նոյեմբեր 20-ի թիվ 14-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՃԱՃԿՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

2) սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ.

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը հաշմանել՝ շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի,

կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ,

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 180000 դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 30000 դրամ.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50000 դրամ.

ե) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 15000 դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 30000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝400000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝1000000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 500000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝150000դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 30000 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 200 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝1000 դրամ:

11.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 5000 դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 500 դրամ:

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ 1000 դրամ:

Համայնքի ղեկավար՝ Մ.Թամազյան

<< 20 >> նոյեմբեր 2015թ.